



ՇԵՂԵՍԵՐՆԵ ՏԵՍՈՒՐԱՆԵ

Վիեննա, 31 Մայիս 1901:

Անգղիա— **Տրանսիլաւայ**: Բուրբուրուն պատերազմին բռնան տակ՝ անգղիական քաակը շատ խորտակն կը հնծե, եւ այս բռնն Անգղիա կրնայ այսօր կրել՝ միայն եւ միայն իւր համբար զո՛ւ չտալու առիպոքս ըլլալուն գիտակցութեամբ: Յայսօր կատարուած կրկին փոխառութեանց վրայ կը յաւելու Անգղիա 60,000.000 անգղ. ոսկոյ մոտ փոխառութիւն մը, որուն կէսն հոգալ յաւան առած են ամերիկեան դրամատներ, մնացածը մայր երկիրը պիտի հոգացուի՝ 2³/₄ առ հարիւրով: Փոխառութիւնը ջնջելի է միայն 1923էն ետքը:

Պատերազմի դաշտէն հասած փոքր լրերը, կը հաւատեն թէ Բուրբուրուն ռազմական դիրքը թարաքտաքս է դարձնալ: Եթէ ի նկատի չառնունք լեռնակառույ փոքր եւ աննշանակ գերեզմարութիւնները, որոնք երկուստեք տեղի կ'ունենան յաճախ ամէնէն նշանակալի դէպքը համարուելու է ապրիլ 25—30ին Պրետորիայի մօտ Բուրբուրուն տարած յաղթութիւնը, որուն լուրը տարածուեցաւ հազիւ ամսոյս 25ին, որ կը ցուցնէ թէ ինչպիսի յաւատ պնդութեամբ անգղիական տեղեկատուութիւնը տհաճոյ եւ ծախող լրերը չոնորս եւ սքողներու կը ճգնի, եւ կը յաշողի իսկ: Այս յաղթութիւնը կատարած են Բէէէր եւ Բրայդէնթալ բուրգորաւորները, ռահւաւանտն գնդով մը, մինչ առաջինը արդէն յաղթութիւն վրայ եղած Բրայդէնթալի օգնութեան հասաւ: Ծակատին մէջ գերի թողնուեցան 600 Անգղիացիք եւ 6 թմուռանօթ, չհաշուելով մեռեալ եւ վիրաւորեալները: Այս գերեզմարութեանց այսչափ յաճախ եւ մեծաքանակ բազմութեամբ պատահելու հնարաւորութիւնը՝ կը կարծուի մեկնուիլ Բուրբուրուն իրենց գերեաց հետ մարդախայել եւ ազնիւ քննարկով վարտաւորակ եւ ապա արձակելովը, որով անգղիացի զինուորը՝ տագնապալից դիպաց մէջ մահուանէն մողորպելու ապաւնով միջոց մը գտած ըլլալով սիրով անձնատուար

կ'ըլլայ: Այս պարագան անգղ. բանակին մէջ կարգապահութիւնն ու բարեկարգութիւնը բոլորովին տակնուվրայ ընել սպառնալուն՝ Անգղիոյ մեծ մտահոգութիւն կը պատճառէ: — Կառավարիչ Միլնըր երեք ամսուան արձակուրդով Ենթապա մեկնած է, ինչպէս ծաղրածուք ոմանք կը մեկնեն իւր բացակայութեամբը հաշտութեան բանակցութիւնները դիտարկելու դիտարկութեամբ:

Աւստրիա: Խորհրդարանն երկարատեւ անգործ կենալէն ետեւ, այժմ կարծես շոգեշարժ մեքենայի պէս սկսած է գործել, շնորհիւ Կեօքերի բաղաբազիտութեան: Ասիկա Զեկներուն համոզ պատուով մը նշուած է ջրանցքներու առաջարկութեամբը, որոնց փոխարէն Գերմանացոց փափաքած հարաւային երկաթուղիաց առաջարկութեամբը, զիտցաւ վերջնոց սիրտն ալ շահիլ: Միայն Եհենբերքեան կոպիտ եւ անկիրթ խումբը, միջոց մը խանքարեց բանակցութիւնները, մին գմիր մողո անհամ եւ անպատիւ հարցապնդումներով: Ջրանցքներու առաջարկութեան մաս կը կարցուցանեն Բոհեմիոյ քանի մը գետերուն կանոնաւորմանն ետքը՝ 1. Դանուբ—Օդեր ջրանցքը, 2. Դանուբ—Մոդարա—Էլքե ջրանցքը եւ 3. Օդեր—Վիսթուլա եւ Վիսթուլա—Դանիպեր ջրանցքը: — Ամսոյս 20ին ընտրուեցան եւ հաւաքուեցան երկուստեք՝ կրկին Պատուիրակութիւնը (Delegation), Պետութեան կարելու խնդրոց եւ ելեւմտին վրայ խորհելու համար: Նշանակալից վիճաբանութիւն մը բացուեցաւ պատերազմի պաշտօնէին վիճակին վրայ խօսուած ժամանակ՝ առանձնաբարութեան (Duel) դէմ, գլխաւորաբար բանակին մէջ պատահած դիպաց դէմ: Պաշտօնեան ընդունելով հանդերձ պետութեան այս մասին դրուած խիստ օրէնքները՝ պապականնայ մնաց սուսերամարտութիւնը բանակին մէջէն վերջընելու մասին եղած առաջարկութեան դէմ: — Մեծ յուզում պատճառեց, ոմանց յուրախութիւն՝ այլոց ի դժկամակութիւն, Գահաժառանգ Արքիդքսին Փ. Փերդինանդոսի՝ կաթոլիկեայ դպրոցապետաց ընկերութեան պաշտպանութիւնը յանձն առնելը, ընդ նմին յայտարարելով որ ալ ժամանակ է Եհենբերքեանց Los von Rom

(Հոռվմէն բաժնուհիւնք) շարժման առջնէն առնելոյ: — Սմանապէս քիչ յուզում չպատճառեց քրիստոնեայ պետութեան մը մէջ՝ Բուստապէստի Համալսարանին հրէափառ վարչութեան Հրէից համոյանալու դիտմամբ՝ ունկնդրութեան սրահներուն մէջէն խաչը բառնալը: Քրիստոնեայ աշակերտաց մեծամասնութեան թողոքն ապարդիւն մնալէն գատ, այս յետիններէս ոմանք, որ համարձակած էին խաչը վերստին իւր տեղը գետնոյ վրայ պատճուեցան այս յանդգնութեան համար: — Աւստրիոյ եւ Գերմանիոյ մէջ բարեկամական կապերն աւելի արտապնդելոյ դիտմամբ՝ Փրանկ. Յովակէփ կայսեր մասնաւոր հրաւերին վրայ Գերմանիոյ զգաժառանգը. Ապրիլ 14ին Վիեննա այցելեց եւ քանի մ'օր կայսեր հիւր մնալով՝ դարձաւ զո՞ր սրտի Գերմանիա, իւր ուսմունքը շարունակելու:

Բողոքաւորս անցեալ ամսոյն առաջին շաբթօնն մէջ իւր նախորդ նախարարապետը Ստոյիլով մահուամբ կորսնցուց: Ստոյիլով անկեղծ հայրենասէր մըն էր, որուն ճիշդ եղած էր Բուլղարիոյ դիրքն ներքուստ եւ արտաքուստ զօրացընելը: Ինքը սակայն քաղաքագիտութեան մասին Աւստրիոյ ոխելով՝ թշնամի էր:

Գաղղիա: Սակա առաւելութեամբ ծայնից ընդունուեցաւ առաջին ընթերցմամբ Միաբանական օրէնքը, որուն 19ի չափ յօդաւորներուն մէջէն միայն մէկ երկուքը բարեփոխելու ստիպուեցաւ Վալդէկ-Ռուսոյ: — Ինչպէս կ'ըսուի՝ մէկ երկու սպրդած թերթիւնացութիւններ հարթելու համար, Իլլկասէ՝ Գաղղիոյ արտաքին գործոց պաշտօնէն, Պետերբուրգ այցելութեան մ'ըրած է, որուն թէ եւ աւելի մեծ քաղաքական նշանակութիւն մը տրուեցաւ բայց որ եւ է որոշ լուր մը հրապարակ չեղաւ:

Գերմանիա: Բիւլով օդափոխութեան համար Իտալիա կատարած ծանապարհորդութեան միջոցին՝ Իտալիոյ նոր պաշտօնարանին Նախագահին ծանադատեցիկ հետ տեսնուելէն ետքը՝ իւր պաշտօնատեղին դարձաւ: — Գերմանիոյ կայսրը իւր կարճ դատաստան կտրելու ընտելեմամբ՝ երբ կամքին հակառակ կը գործուի, գերմ. Ջրանցքներու խնդրին մէջ՝ որուն ինք ամենայն սրտի յառնալ է,

տեսնելով պահպանողականաց եւ կենդրոնի ընդդիմութիւնը, որով առաջարկեալ օրինաց մերժումն ապահով էր՝ առանց տատանելու փակել տոռա Պրուսիական Կառաւարական ժողովը, որպէս զի այսու ազատ ձեռք ունենայ կառավարութիւնը: Ջրանցքին միակ զո՞ն ժողովը ընդառ, իւր յորդառատ ջրերը կուլ տուին նաեւ երեք պաշտօնէնացի եւս, ելեմտիցը՝ Միքսեռ, երկրագործութեանը՝ Համերշտայն-Լոքստեկն, եւ առեւտրոյն՝ Բրեքելդ: Ասոնք այն երեք պաշտօնէններն են, որոնց կը հայէր ամէնէն աւելի առաջարկեալ օրէնքը: Ասկէ գատ նմանապէս մեծ խնդրոյ եւ բանակոտի նիւթ ընծայած է արմտեաց մարքի օրէնքը, որուն մասին կատարուած բանակցութեանց վրայ խոր լուծիւն կը պահուի: Անշուշտ տեսնուած այս ընդդիմութիւններս են պատճառ, որ Խորհրդարանի բացումը յապաղուած նախատեսուած է Եոյնիք. 26ին: — Կայսեր մասնաւոր հրահրին վրայ՝ Հոլանդայի թագուհին, որ իւր ամուսնոյն հետ Եվրոպին կը գտնուէր ամսոյս 30ին Բերլինի վրայէն ուր կայսրն եւ կայսրուհին հիւրերը անձամբ ընդունանքն անցաւ Պոդգրամ, ուր քանի մ'օր կայսեր անձնական հիւրերն ըլլալու մտադիր են: Այս այցելութիւնը պարզապէս խաղաղամիտութեան է:

Իտալիոյ եւ Գաղղիոյ մէջ՝ վերջնոյս Տունիզի քաղաքագիտութեան պատճառաւ մտած պաղտութիւնը փարատելու եւ լաւ յարաբերութիւններ հաստատելու դիտաւորութեամբ անշուշտ՝ իտալական նաւատորմին ճնշովայի դքսին առաջնորդութեամբ գաղղիական ջրերը, Տոռոն այցելութեան մը տոռա: որ առթիւ եղած քաղաքավարական բանածներուն եւ ճանդերուն մէջ՝ Գաղղիա դիտել կը կարծէ երից Դաշնակցութեան զո՞ն Իտալիոյ քիչ շատ պաղտը, եւ ասկէ այլեւայլ յոյսեր կ'արծարծէ: Ծաննային դէպք քաղաքական նշանակութիւն ունեցող դէպք մ'ըլլալու է այս այցելութիւնը, վասն զի ծովակալ Բիրիլլիի հրամանատարութեան տակ՝ Տուլուն ջրերն գտնուող ոռոսական նաւատորմիդը ուղղակի Պետերբուրգէն տրուած թաղարկը նրամանաւ հեռացաւ Տուլուն, իտալական նաւատորմին չհանդիպելու փափաքաւ: Այս միջադէպին սուր

ծայրը կտորելու դիտադրութեամբ է անշուշտ որ Գաներկց Լուբէ՝ Վիֆրանշի Ջրերուն մէջ ուղեւորնք անձամբ ոռոտակիւն նաւատորմիդը: — Թագաւորասպանն Իրէշի՝ Ս. Ստէֆանոյի արգելանոցը փոխադրուելն քիչ ետքը ինք զինքը կախելով անձնասպան եղած է:

Ծննդավայրը: Այսօր կարելի է հաստատութեամբ ըսել թէ պատերազմն ունչ աւաւաշտած է: Դիտաւորք դաշնագրոյն պայմաններուն մասին կը բանակցին ծնն պատմաիրանկներուն հետ: Էական կէտն է յամենայն դէպս հատուցման պահանջը, որ կ'որ հաշուով 400 միլիոն տաւել կը կազմէ: Այս հատուցումն բաժիննէնով տարել տարի պիտի կատարուի, եւ այժմ ինչո՞րի է թէ դրամագլխուն շահն ալ պահանջելու է բաժնից հետ, եւ թէ երբ վերջնականապէս պիտի վնայ ամբողջին վնարոտմը: Արդէն իսկ պետութիւնը իրենք բանակները մաս մաս նաւ կը քաշեն հետգլխոէ: Գերմանական առտարումդին հինգ զորամասերուն նմաբայ ելած է ինչ դէպի մայր երկիրը: Հրամանատար Վալդերգէ իր պաշտօնը կատարած ըլլալով գալ ամառն սկիզբնէն Գերմանիա պիտի դառնայ, յառաջագոյն մասին հանդիպելով, որ հիշելիք վնայ Միջազոյին մասնաւոր հրաւիրանք՝ իր երկու շարքաւ: — Պատերազմին յիշատակելի վերջին դէպքն է Ապրիլի սկզբները կատարուած գերմանագաղթիսկան միացնել արշաւանքը ղէպի ծննական պատը՝ ապտամբներ նուաճելու համար: Հրամանաւրին է՝ որ գաղթական բաժինը ճակատին չմանակցնցուտ, այլ շատացաւ գերմանականին դարձի գիծն ապահովելով: — Գերմանիոյ համար վերջին հարուած մ'ալ եղած է Վալդերգէի աստիճանայ տան՝ արքայական պալատին մէջ ապրիլ 18ին հրոյ ձառակ եղած միջոցին, գոյլ: Շվարցհիլի կրակին գոն երթմալը: Ասով Գերմանիա երկուս գորտաւոր կորսնցուցած է պատերազմին հուրս՝ ղգբախտ արկածներով: Ծննականնէն կատարութիւնը քաշահական պատուոհրակութիւն մը կը ղրկէ Գերմանիա՝ իրը հատուցում Կէստուէրի Գերմանիոյ դեսպանն սպանման. պատուիրակուիւնը գալ ամառն մէջ ծամբայ պիտի ելլէ: —

Ռուսիա տեսնելով եղած ընդդիմութիւնը

Մանկոթիոյ դաշնագրին պահանջն ետ առած է յարմարագոյն ժամանակի սպասելով:

Մերթիա իւր գաւառապետանցի ակնկալութեանցմէջ յռուսիսք եղաւ: Դրապա Թագուհոյն վիճակը բժշկական կալուածամէջ երեսացի հիւանդութեան մ'արդիւնք ճանչցունեցաւ, եւ ոչ թէ պտղաբերութիւն: Աղքատաւոր Թագաւորը՝ որ ի սկզբան անդ կարծած էր թէ Դրապա զհինր խաբած ըլլալ, Թագուհոյն անմողութեան վրայ փափա՛ն ըլլալով՝ հրապարակեւտուած ամէն տեսակ երեւակայական զրոյցներուն վերջ տուաւ: Բժիշկները կը հաստատուն թէ Մերթիա ղեռ միշտ կըրնայ յոյս ունենալ գաւառապետանց մը տեսնելու:



የብሔራዊ የጥበቃ ሚኒስቴር

በጉሳኝ ሰርገን

ԳՐԱԿԱՆ — Կատարա միանմունկին եւ Հայերը. 129:
ՊԱՏՄԱՆԱՆ — Նոյսարեթթուադուսոյ ազգայինը պա-
հանչուած նոր արտօնազգութիւնը կ'ընդունին.
132:

ԿԾՆՍԱԳՐԱԿԱՆ — Ռէստէն Միքայէլ բժիշկ Տէր
Պետրոսեան. 138:

ՀԵԱԳՐԱԿԱՆ — Նաիրի-Ուրարտուի պատմութիւնն
ըստ ասորեստանեան եւ պարսիկ սեպագիր ար-
ժանագրութեանց. 148:

ԵՐԿՐԱՆՕՍԱԿԱՆ — Երկրախօսական ուսումնասիր-
րութիւններ Փոքր Ասիոյ հարաւ - արեւելքան
կողմը. 165:

ՀԵՋՈՒԱԲԱՆԱԿԱՆ — Արարկիթի գաւառաբարդադր.
173: — Արդի լեզուագիտութիւնը. 177: — Նա-
խահայերէնի հետքեր զօկերէնում. 180:

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ — Զննադատութիւնը Նզնկայ
գերմաներէն թարգմանութեան վրայ. 181:

U6L6TU6L6

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ. 184:

ԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԻՐՈՒՄԸ ԺԱՂՎԷՓՈՒՆԸ - 1. Մխիթարյանց վարչ տեղեկությունը ներդասխան թերթերու մէջ. - 2. Յ. Ալիազարդիկի յիշատակը՝ զգալորոտաբանակ մոռոյվածու մը. - 3. Մարգար, յստակ չայեղնի աշխարհացար, - Եւ Բազումակ, - 4. Նալեցեախի էայոց արքեպիսկոպոսն մահը, եւ նոր ընտուրութիւն աւերց առաջարկութիւնը, - 5. Ժողովուրդին համար, - Նոր լրագրք մը. - 6. Գուլում, - ներկազմոծական թերթ մը. - Օգտակար գիտութեանք. 187:

ՀԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ 190:



ՀՐԱՏԱՐԱՆԿԻՉ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ

3. ԲԱՓԱՅԷԼ 4. ԳԱՐՈՆՉ

ՎԻՃԵՆԱՆ, ՄԻՒԹԱՐԵԱՆ ՑՊԱՐԱՆ